ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 457 - Ա

«ՔԱՋԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի N 8 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Մարինա Գևորգյանի հետ 2022 թվականի նոյեմբերի 14-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. 2022 թվականի նոյեմբերի 14-ից լուծել «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սպարտակ Ստեփանյանի հետ 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 17 աշխատանքային պայմանագիրը՝ գործողության ժամկետը լրանալու պատճառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

14.11.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 14
ք. Կապան